

ԱՍՏՎԱԾԱՆԵԼՉՅԱՆ ԿԱԶՄԱՌՈՍԱԿԱՆ ԴՄ-ՆԵՐԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎԱԾԻ ԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՅՏԵՐԵՆ-
ԱՆԳԼԵՐԵՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Դարձվածաբանները, խոսելով դարձվածքների մասին իրավամբ նշում են, որ դրանք պատմալեզվամշակութային կյանքի խտացված դրսևորումներ են (տես՝ օրինակ, Амосова Н. Н., 1963, Голдабина С. В., Флудленкова Т. Н., 1996, Кунин А. В., 1979 և այլն) և ծագել են (շարունակում են ծագել) մարդկային կենսագործունեության տարբեր ոլորտներում՝ որպես երկարամյա փորձառության, դիտարկումների և փիլիսոփայական ընդհանրացումների արդյունք:

Որպես դարձվածքների հարուստ շտեմարան նշվում են տվյալ ժողովրդի, ազգի կամ էթնիկ հավաքականության բանահյուսությունը (էպոս, հեքիաթ, հանելուկ և այլն), դիցաբանությունը (օրինակ, հին հունական առասպելներն ու լեգենդները), պատմական անցքերը, եղելությունները, դեպքերն ու դեմքերը (դրանց ճանաչողական ու գեղագիտական նշանակությանը վերաբերող լեզվական դրսևորումները), գյուղական ու քաղաքային կյանքի մշակույթը, միջմշակութային կապերն ու փոխներթափանցումները (որի արդյունքն են, մեծ մասամբ, միջազգային դարձվածքները՝ *աթլիետյան գարշապար, տրոյական ծի, Լինչի դատաստան* և այլն), սոցիալական և գիտամշակութային կյանքի դրսևորումներով և իր տարատեսակ բացահայտումներով, գեղարվեստական բազմաժանր զրականությունը (հայերի մոտ, դիցուք, Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», Գրիգոր Նարեկացու «Մատենա»-ը, Հովհ. Թումանյանի, Հրանտ Մաթևոսյանի և մյուս գրողների, անգլիացիների մոտ՝ Շեքսպիրի, Ջ. Բայրոնի, Օ. Ուայլդի և մյուսների ստեղծագործությունները):

Այս ամենի մեջ, որպես դարձվածքների շտեմարան, առանձնահատուկ տեղ է զբաղում Աստվածաշունչը, որտեղ առկա են ամենատարբեր և տարաբնույթ դարձվածքները, այնպիսիք, որ վերաբերում են՝

ա) առօրյա կենցաղականությանը՝ «*ծեռքը ծեռքին դրած*» (անգործության, ծուլության մատնված), «*ծեռքը դրեցիր մահձին՝ ետ մի նայիր*»,

բ) մարդու մարմնավոր, ֆիզիկական ու հոգևոր վիճակին՝ «*քթից եկավ*» (պատժվեց), «*երեսի «փրտը քար կտրեց, գույնը գցեց*»,

գ) բնության երևույթներին՝ «*քամին ուր է փչում*», «*վեր կաց, հիսիսի քամի*»,

դ) մշակութային, գիտական կյանքին՝ «*ես եմ այժման ու օմեզան*»,

ե) ռազմական կյանքին՝ «*Դու ես իմ ասպարն ու վահանը*», «*Իզուր տեղը տուր մի ճոճեք*», կենդանական և բուսական կյանքին՝ «*Ահա առյուծը Դավթի ցեղից*», «*ես դաշտերի ծաղիկ եմ, հովտաց շուշան*»,

է) առ Աստված եղած հավատքի հետ՝ «*Աստված մաշող կրակ է*», «*Երկինքն ու երկիրը պատմում են Աստծու փառքը*» և այլն:

Ամենատարբեր դարձվածքային միավորների (ԴՄ) շարքում Աստվածա-
շնչում առանձին տեղ են զրավում կազմախոսական (սոմատիկ)՝ մարդու մարմնա-
մասերի անվանումներով դարձվածքները: Այդօրինակ դարձվածքներով խոսելը
բնորոշ է ուլջ Աստվածաշնչին, բայց ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ
դրանք մասնավորապես շատանում են սաղմոսներում, առակներում, Հոբի գրքում,
մարգարեություններում և հորս Ավետարաններում: Ավելին, աստվածաշնչյան շատ
տեքստեր գրեթե ամբողջությամբ հագեցած են կազմախոսական ԴՄ-ներով, ինչպի-
սին է, դիցուք, հեռույալ (կրճատումով տրված) հատվածը՝ «Առակներ»-ից (տրվում
է սկզբում հայերենը՝ որպես առավել հին թարգմանական ավանդույթ, ապա
անգլերենը): Որդեակ, պահիր հորդ օրենքը եւ մի մերժիր մօրդ խրատը: Ընդունիր
դրանք հօգուդ մէջ, մշտապէս պահիր քո գլխում եւ, իբրեւ մանեակ, գցիր քո
պարանոցին:

Երբ ծանապարհ գնաս՝ հետդ տար,
եւ թույ դրանք քեզ հետ լինեն.
Երբ քնած լինես, պիտի քեզ պահպանեն,
Երբ արթնանաս՝ պիտի գրուցակից լինեն քեզ:
Օրենքի պատուիրանը ծրագ է,
յանդիմանութիւնը ու խրատը լոյս են
եւ կեանքի ծանապարհ:
Նրանք քեզ հեռու կը պահեն ամուսնացած կնոջից
եւ օտար կնոջ չար լեզուից:
Որդեակ, թող քեզ չ'յաղթի կնոջ գեղեցկութեան ցանկութիւնը.
Թող չ'բռնենք քո աչքերը նրանով,
Յի՛ որապարտուիր նրա թարթիչներով,
Զանգի պոռնիկ կնոջ պատճառով
կարող ես մի նկանակ հացի կարտու մնալ.
Որովհետեւ չար կիներ որսում է հոգին
պատռական մարդկանց
Հնարավո՛ր է արդեօք, որ մեկը
դրանք պահի՞ իր գոգի մէջ
եւ չորը չայրի.
Կամ որեւէ մեկը բոքիկ ճալի
կայծ ու կրակի միջով
եւ իր ուռչեղը չայրի.
այսպէս էլ անհարին է որեւէ մէկին
մոռնի ծածուսացած կնոջ մոռլ:
Եւ առանց պատժի մնալ
ով էլ որ մերժենայ նրան՝ չի արդարացուելու.
Բոլոր երբեք մեկը չ'ստանաւ է թշնջի պակասութեան պատճառով.
Նա կորստի է մատնում ինքն իրեն,
Նա ցավ ու անարդարանք պիտի կրի,
եւ երբեք չի ցնցուելու նրա նախասիրանքը: »

(Առակներ, 6:20-33)

My son, keep your father's commandments,
and they will be your wisdom's teaching.
Bind them upon your heart always, tie them about your neck.
When you walk, they will lead you.

When you lie down, they will watch over you;
 and when you awake, they will talk with you.
 For the commandment is a lamp and the teaching a light,
 and the reproofs of discipline are the way of life,
 to preserve you from the evil woman,
 from the smooth tongue of the adventuress.
 Do not desire her beauty in your heart,
 and do not let her capture you with her eyelashes;
 for a harlot may be hired for a loaf of bread,
 but an adulteress stalks a man's very life.
 Can a man carry fire in his bosom and his clothes not be burned?
 Or can one walk upon hot coals and his feet not be scorched?
 So is he who goes into his neighbor's wife:
 none who touches her will go unpunished...
 ...He who commits adultery has no sense;
 he who does it destroys himself.
 Wounds and dishonor will he get,
 and his disgrace will not be wiped away.

(Proverbs b:20-33)

Ինչպես նկատում ենք, Աստվածաշնչի հայերեն ու անգլերեն թարգմանություններում որոշ տարբերություններ կան: Դրանք բացատրվում են թարգմանական տարբեր ավանդույթներով, մասնավորապես ակնառու են հետևյալ տարբերությունները անգլերենում, եթե հայերեն թարգմանենք, փաստորեն ասվում է՝ «Դրանք միշտ կապիր քո սրտին» (6:21), հայերենում՝ «Ընդունիր դրանք հոգուդ մեջ, մշտապես պահիր քո գլխում», անգլերենում՝ «որպեսզի քեզ պահեն օտար կնոջ շողորժող լեզվից» (6:24), հայերեն՝ «օտար կնոջ չար լեզվից», անգլերեն՝ «թող քեզ չբռնիր արտահանունքներով», հայերեն՝ «մի հրապուրվիր նրա արտահանունքներով», անգլերենում:

Զնայած այսօրինակ, կարելի է ասել մասնակի տարբերություններին (կամ՝ տարբերակներին) հայերենը և անգլերենը հիմնականում նույնն են այն առումով, որ երկու լեզուներում էլ գործում են նույն կազմախոսական ՂԱ-ները՝ կազմված «լեզու», «արտահանունք», (կամ «թաթիկներ»), «աչքեր», «ծոց» (կամ «գոգ»), «հոգի», «խելք», որոնցից վերջին երկուսը պատկանում են մարդու հոգևոր կազմին.

Հատկանշական է, որ դարձվածաբանները, որքան մեզ հայտնի է, կազմախոսական ՂԱ-ների շարքում չեն քննարկել մարդու հոգևոր կազմը մատնանշող (խելք, միտք, հոգի, կամք, խոսք, իմաստություն, խիղճ, գուք և այլն) և մարդուն հատուկ երևույթներով, իրողություններով ու գործողություններով (բուն, նինջ, մածմորույթ, մտածմունք, արիություն, վախ, ծուլություն, բարություն, չարություն, վեհություն, քայլել, նստել, վեր թռնել, հասնել, բռնել, տիրել, հիանալ, ուրախանալ, ժպտալ և այլն) անվանումներով կազմված դարձվածքները: Զե՛ որ մարդը ոչ միայն ֆիզիկական, այլ հոգևոր կազմ ունի, որի մեջ են մտնում նշյալ հատկացությունները՝ խղճմտանքը, միտքը, գիտելուները և նրա տաղանտավետները, ինչպես նաև վերոնշյալ մարդկային գործողությունները՝ ժպտալ, տիրել, գիտելուները և այլն.

որոնք հատուկ են միայն մարդուն և միայն փոխաբերաբար կարող են վերաբերել կենդանական ու բուսական աշխարհի ներկայացուցիչներին:

Կազմախոսական ՂԱ-ների մեջ պետք է դասել նաև մարդու ներքին-հոգևոր կազմին վերաբերող և այդ կազմով պայմանավորված մարդկային գործողությունների անվանումներով կազմված ՂԱ-ները, այսինքն՝ այն արտահայտությունները, որոնք ունեն դարձվածներին բնորոշ հատկանիշները՝ կայունություն (որն առկա է տվյալ լեզվական միավորների՝ բառերի ու բառակապակցությունների, դրանց զուգորդումների միջև) և, միաժամանակ, այլաբերական որոշակի նշանակություն:

Եթե քնես, քունդ անուշ կը լինի...

Ղարձվածքային տարբերակներ կարող են առաջանալ նաև մակբայի կամ բայի փոփոխության պատճառով, ինչպես նաև միմյանց հետ կոնվերսիվ հարաբերության մեջ մտած բառերի (և ամբողջական ՂԱ-ների) սեռային փոփոխելիության միջոցով, օրինակ՝ «*Բերանի ծամոն դառնալ*», (չեզոք սեռ), «*Բերանի ծամոն դարձնել*» (ներգործական սեռ), «*Բերանի ծամոն դարձվել*» (կրավորական սեռ): Ինչպես և նշում են լեզվաբանները, անգլերենում այդօրինակ սեռային փոփոխակները տեղի են ունենում կոնվերսիվների միջոցով (Kymaxova M., 1985:24).

ա) երբ փոխվում են բայական բաղադրիչները՝ have smb at one's back and call-be at smb's back and call,

բ) երբ արտահայտություններում միմյանց են փոխարինում one's և somebody's որոշարկիչները, որոնցով որոշարկվում է գործողություն կատարողը՝ ինքը՝ ենթական կամ միջնորդավորող առարկան (որևէ մեկը),

գ) երբ ներգործական բնույթի ակտիվ ՂԱ-ն, որպես կառույց, փոխարկվում է կրավորականի՝ to be + participle 2 և have/get + something + participle 2 բանաձևերի միջոցով (Եղիազարյան Գ. Վ. 2005:90):

Աստվածաշնչյան տեքստերում. թե հայերեն, և թե անգլերեն թարգմանություններում հիմնականում շրջանառվում են անփոփոխ, ոչ կոնվերսիվային սկզբնատիպային կամ արքետիպային ՂԱ-ները, ասենք, օրինակ, հետևյալ ասույթը՝ «*Ո՛վ Աստուած, ի մէջս մաքուր սիրտ ստեղծէ եւ իմ ներս ուղիղ հոգի նորոգէ՛*» (Սաղմ. 51:10)2: Անգլերենը՝ «*Create in me a clean heart, o God, and put a new and right spirit within me*» (Psalm 50:10):

Իհարկե, բերված օրինակով ամենևին էլ չենք ուզում եզրակացնել, որ Ս. Գրքում կիրառված չկան դարձվածային կոնվերսիվներ (այդպիսիք կան և կարող են դառնալ գիտական հատուկ ուսումնասիրության առարկա), սակայն ուզում ենք ասել, որ գերակայում են արքետիպային, դոգմատիկ բնույթի, անփոփոխ, երբեմն՝ սակրալ նշանակություն ունեցող ՂԱ-ները, մասնավորապես՝ կազմախոսական ՂԱ-ները:

Սակրալ նշանակությամբ օժտված լինելը, բացատրվում է նրանով, որ ըստ աստվածաշնչյան մտածողությամբ մարդու մարմինը համարվում է տաճար (Աստծո Սուրբ Հոգու բնակարան), ուստի և նրա մասերը կամ բաղադրիչները ևս սուրբ են: Ղրանց մեջ ելակետային փրկագործական նշանակություն ունի *Սիրտը*, որը Ս.

Գրիգոր Լուսավորիչն անվանել է խորհուրդների (մտածումների, ոգորումների) շտեմարան, Սուրբ Հոգու տաճար, Հոգու շարժումների ընդունարան:

Ս. հայրերը գտնում են, որ *սրտի* խորհրդական ընկալումը ավելի (այն է, քան նրա մարմնավոր-տեղեկայական ընկալումը, և նրա խորհրդական ընկալումը տարածվում է մարդաբանական ողջ կառույցի վրա:

Ս. Գրիգոր Տաթևացին մարդաբանական կառույցի մեջ որպես գլխավոր անդամ է դիտում սիրտը՝ նմանացնելով արեգակի, իսկ մյուս անդամներին՝ մոլորակների նրա շուրջ (տես Աղօթագիրք 2000:259):

Ուստի խոսել մարդու մարմնի տարբեր մասերի (*սիրտ, հոգի, միտք, գլուխ, մազեր, երես, աչք, արցունք, ականջ, ճակատ, ձեռք, ոտք, քիթ, բերան, շրթունք, լեզու, ատամ, ոսկոր, փոր, լյարդ, արյուն, կոկորդ, երիկամներ, մատներ և այլն*) անվանումներով կազմված աստվածաշնչյան ՂԱ-ների մասին, նշանակում է խոսել նախ և առաջ դրանց աստվածաշնչյան ու մեկնարկետային (հերմենևտիկական) համապատասխան ընկալումների, ապա և լեզվաոճական ու լեզվաբանաստեղծական նշանակությունների մասին:

Բերենք ասվածը հաստատող հատկանշական օրինակներ հայերեն և անգլերեն թարգմանություններով, որոնք նման ՂԱ-ների առաջնային, այսինքն՝ խորհրդական և սակրալ շերտերը ներկայացնում են յուրովի, ըստ իրենց ազգապատմա-լեզվամշակութային նկարագրի և յուրահատկությունների:

Այս առումով տարալեզու այդ ՂԱ-ները՝ թարգմանված Սուրբ Գրքի բնագիր լեզուներից ներկայացնում են փաստորեն միևնույն ՂԱ-ների ուշագրավ տարբերակները:

Ահա «խորհուրդների շտեմարանի»՝ սրտի մասին մի ասույթ՝ Երեմիայի մարգարեությունից. ընդ որում՝ մի ասույթ, որը ելակետային, առանցքային նշանակություն ունի ողջ Սուրբգրային մտածողության հասկացման առումով և իր տարբերակներն ունի աստվածաշնչյան մյուս տեքստերում:

Սիրտը խոր է, քան ամեն բան.

մարդ արարած է, ո՞վ կարող է ճանաչել նրան.

(Երեմ. 17:9)

Գրական արևելահայերեն այս թարգմանական տարբերակը թեև խիստ ուշագրավ է իր արտահայտած մտքով (այն է՝ քանի որ մարդն արարած է, այսինքն՝ Աստծո կողմից արարված, ուստի ոչ ոք արարածներից չի կարող ճանաչել նրան, բացի Արարչից), բայց զգալիորեն տարբերվում է արևմտահայերեն թարգմանությունից, որտեղ ասվում է.

Սիրտը ամեն բանէն անելի խաբեբա ու խիստ չար է,

Ջանիկա ո՞վ կրնայ գիտնալ:

(Երեմ. 17:9)

Թարգմանության անգլերեն տարբերակը նման է արևմտահայերենին.

The heart is deceitful above all things,

and despreately corrupt;

Who can understand it?

(Jeremian 17:9)

Շեշտադրվում է *սրտի* ճանաչումը, այն, որ «ամեն բանն աւելի» սիրտը խաբեբա ու չար է, ուստի հիմնանդիք է դառնում փոխված. ծյունից ավելի սպիտակ սիրտ ունենալը, որը թույլ է տալիս կամ իրավունք է տալիս մարդուն առնչվել կենդանարար Արարչի հետ: Բայց այս երկու թարգամանությունները (անգլերեն և գրական արևելահայերեն), որպես նույն կազմախոսական դարձվածքի տարբերակներ, թույլ են տալիս առավել լայն ըմբռնել նշյալ արտահայտությունը, որից հետո միայն հնարավոր է դառնում տվյալ ատույթի լեզվաոճական ու լեզվաբանաստեղծական համակողմանի վերլուծությունը:

Ինչ վերն ասվեց կազմախոսական դարձվածքի հայերեն ու անգլերեն թարգմանական տարբերակների մասին՝ վերաբերում է նաև հետևյալ հատկանշական հատվածին, որտեղ առկա են մարդու մարմնամասերի (*աչքեր, երես, լեզու, մատներ, արյուն, բերան, ծեռք, սիրտ, ոտքեր*) և հոգևոր կազմության (*հոգի*) անվանումներով ԴԱ-ներ.

Անօրեն եւ անգգամ մարդը ծուռ ճանապարհներով է գնում,
որովհետեւ հէնց ինքն է աչքերը թարթում,
ոտքերով ցոյց տալիս
եւ նշանացի սովորեցնում մատներով:
Խոտորուած սիրտը չարիքներ է նիւթում
եւ ամէն ժամանակ սերմանում է խռովութիւն քաղաքում:
Այդ պատճառով էլ նրա կորուստը պիտի հանկարծակի գայ,
նա պիտի հաշմուի եւ մաշուի առանց բուժումի:
Նա ծիծաղում է այն ամէնի վրայ, ինչ ատում է Տէրը,
եւ իր հոգու պղծութեան երեսից էլ պիտի կործանուի:
Այն աչքերը, որ թշնամանքով են նայում,
այն լեզուն, որ սուտ է խոսում,
այն ծեռքերը, որ արդար արիւն են թափում,
այն սիրտը, որ չար խորհուրդներ է նիւթում,
այն ոտքերը, որ շտապում են չարիքներ գործել,
պիտի ոչնչանան:
Անիրաւ վկան բորբոքում է ստութիւնը
եւ գրգռութիւն է գցում եղբայրների միջեւ: (Առակ. 6:12-19)

Նույնի անգլերեն թարգմանությունը պետք է դիտարկել իբրև տարբերակ, որը նման է Աստվածաշնչի եբրայական կանոնին պատկանող Աստվածաշնչի արևմտայաբեն թարգմանությունը («Անօրեն ու չար մարդը ծուռ բերնով կը շարժի», «Ոտքերովը կը խոսի», «Տէրը վեց բան է կը գզուի» ու անոր հոգին առջեւ եօթը բան պիղծ են, «Չար խորհուրդ հնարող սիրտ» և այլն):

A worthless person, a wicked man,
goes about with crooked speech,
winks with his eyes, scrapes with his feet,
points with his finger,
with perverted heart devises evil,
continually sowing discord;
therefore calamity will come upon him suddenly;
in a moment he will be broken beyond healing.

There are six things which the Lord hates,
seven which are an abomination to him;
haughty eyes, a lying tongue,
and hands that shed innocent blood,
heart that devises wicked plans,
feet that make haste to run to evil,
a false witness who breathes out lies,
and a man who sows discord among brothers.

(Proverbs 6:12-19)

Կազմախոսական նման ՂԱ-ների խորհրդական իմաստների վերհանումները և տարալեզու թարգմանությունների զուգադրումները թույլ են տալիս առավել խորությամբ ու համակողմանիորեն ճանաչել աստվածաշնչյան նշյալ դարձվածքը, նրա իմաստային նրբերանգները:

Եվ քանի որ այդ կարգի կազմախոսական ՂԱ-ները սկզբնատիպի նշանակություն են ունեցել հետագա հեղինակների (Նարեկացու, Շեքսպիրի և Չ. Դիքենսի և հետագա շրջանի շատ այլ գրողների) համար նրանց կողմից կիրառվելով գաղափարագեղագիտական ու դարաշրջանային տարբեր միջավայրերում, ուստի և վերոնշյալ կարգի դարձվածքաբանական ուսումնասիրությունները կարող են հիմք ծառայել տարաբնույթ գեղարվեստական անդրադարձերի և առիաստարակ՝ գեղարվեստական տեքստը կազմող լեզվաոճական տարբեր միավորների լիաճանաչության և բնութագրման համար:

Գրականության ցանկ

1. Բաղիկյան Խ., Դարձվածային ոճաբանություն, Ե., ԵՀՀ, 2000:
2. Եգեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Ե., ԵՀՀ, 2003:
3. Եղիազարյան Գ. Վ., Մարմնի մասերի անվանումներով կազմված դարձվածքները, ք.գ.թ. ատենախոսություն, Ե., 2005
4. Գիրունյան Գ. Ս., Գրական անդրադարձի որպես արտահայտչական հնարի մեկնողական ընդգրկումը, ք.գ.թ. ատենախոսություն, Ե., 2005:
5. Амосова Н. Н., Основы английской фразеологии, Л., 1963
6. Голдабина С. В., Федупенкова Т. Н., Роль античной и крестьянской культуры в изучении фразеологии современного английского языка.// Культуроведческие аспекты... Теория, проблемы, опыт реализации.// Тезисы нац.-практич. конф., Тюмень ТГУ, 1996
7. Кунин А. В., Фразеологизация и источники фразеологических единиц.-В КН.: Словообразование и фразеобразование, М., 1979
8. Балли Ш., Французская стилистика, М., 1961
9. Уфимцева А. А., Слово в лексико-семантической системе языка, М., 1968
10. Cowie A. D., The Treatment of collocations and idioms in learner's Dictionaries. Applied linguistics, 1981; #2, 3
11. Кумахова М., Семантические особенности фразеологических конверсиров современного английского языка.// Фразеологическая семантика в коммуникативном аспекте. Сб. науч. тр., М., 1985, вып. 244
12. Աղթափորք, Շրեան, ՎԷՄ, 2000
13. Lyons J., Introduction to Theoretica Linguistics, Combridge, 1965